ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2017 թվականի N 62-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 116-րդ կետի, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 6-ի N 26-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետի և 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության, հաշվի առնելով Զորայր Կարապետյանի ներկայացրած դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Զորայր Կարապետյանին տալ համայնք Գետամեջ 3-րդ փողոց N 15 հասցեում գտնվող հողամասում պահեստի կառուցման շինարարության թույլտվություն:
2. Սույն շինարարության թույլտվությունը միաժամանակ համարվում է քանդման թույլտվություն՝ հետևյալ օբյեկտների համար, արտադրամաս՝ 343,2 քառակուսի մետր, կաթսայատուն՝ 56,8 քառակուսի մետր, ծածկ՝ 4,9 քառակուսի մետր և պահակատուն՝ 11,7 քառակուսի մետր մակերեսներով:
3. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Գետամեջ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զորայր Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի սեպտեմբերի 25
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2017 թվականի N 63-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «ա)» ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Օրինականացնել Հայկ Գարեգինի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 3-րդ փողոցի 3-րդ փակուղու N 1/1-ին հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային համար՝ 07-025-0015-0026) 2015 թվականին ինքնակամ կառուցած բնակելի տունը՝ 61,73 քառակուսի մետր արտաքին մակերեսով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշված 61,73 քառակուսի մետր արտաքին մակերեսով ինքնակամ շինությունը կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի գյուղապետարանի 900115112063 հաշվեհամարին վճարել 80 250 (ութսունհազար երկու հարյուր հիսուն) դրամ:
4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2017 թվականի սեպտեմբերի 26
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2017 թվականի N 64-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Արմինե Պետրոսյանին Գետամեջ համայնքի 3-րդ փողոցի թիվ 7 հասցեում գործող մանրածախ առևտրի խանութում 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ն իրականացնելու.

1) ոգելից խմիչքների արտադրանքի մանրածախ վաճառք.

2) ծխախոտի արտադրանքի մանրածախ վաճառք:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2017 թվականի սեպտեմբերի 29
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2017 թվականի N 65-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Նախկին գ. Գետամեջ (Պտղնի) այգետնակի և այգեհողամասի հասցեում գտնվող Գևորգ Հարությունի Իջյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2143773, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0225-0054/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 13-րդ փողոց, 3-րդ փակուղի, N 11 այգետնակ:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2017 թվականի սեպտեմբերի 29
գ.Գետամեջ